3

ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վերժինե Սվազլյան*

1915 թ. 40 օրվա ընթացքում մուսալեռցիները Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դմլաքյանի և վերապատվելի Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ համառ մարտեր են մղել թուրքերի դեմ: Այդ ընթացքում Քըզըլջայի, Քուզջըղազի, Դամլաջըքի և Ղափլան Դուզախի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունեցել: Մուսա Լեռան ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակիցներ 105-ամյա *Մովսես Փանոսյանը* (ծնվ. 1885 թ.), *Պողոս Սուպկուկյանը – Աշոող Դևելլին* (ծնվ. 1887 թ.), *Մովսես Բալաբանյանը* (ծնվ. 1891 թ.), *Հովհաննես Իփրեջյանը* (ծնվ. 1896 թ.), *Տոնիկ Տոնիկյանը* (ծնվ. 1898 թ.) և ուրիշներ, որոնք 1946 –1947 թթ. հայրենադարձվել են Խորհրդային Հայաստան, հանգամանորեն հաղորդել են ինձ պատմական այդ իրադարձությունների մասին: Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց: Այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ և միասնական կամքի ուժ:

Բանալի բառեր. Մուսա լեռան հերոսամարտ, Կիլիկիա, Դամլաջըք, «Կիշեն» ռազմանավ, Կարմիր խաչ, Պորտ Սայիդ, վրանաքաղաք, Այնճար, Հայաստան, Նոր Մուսա Լեռ:

Օսմանյան կայսրության երիտթուրք ղեկավարները Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցեցին զավթողական նպատակներով և հայերի բնաջնջումն իրականացնելու իրենց հրեշավոր ծրագրով:

Մուսա Լեռան հերոսամարտի մասնակից, ականատես-վկա *Պողոս Սուպկուկյանը – Աշոող Դևելլին* (ծնվ. 1887 թ., գ. Հաջի-Հաբիբլի), որպես պատմական այդ իրադարձությունների ժամանակագիր, իր հարազատ բարբառով գեղարվեստորեն ներկայացրել է ոչ միայն 1915 թ. հայ ժողովրդի կրած անլուր տառապանքները, այլև Կիլիկիո հայությանը բաժին հա-

* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր:

սած ողբերգությունը «*Կիլիկը բալէն*» (Կիլիկիո աղետը) պատմական վիպերգով, որը ներկայացնում եմ զուգահեռ գրական թարգմանությամբ.

Հազուր էնը հարէր դրսնրհէնգ դարէն
Իղուվ փրթրվիլը Կիլիկը էրմանէն,
Էնվէր վէ Թալաաթ փիժգը փաշինէն
Սաբաբ իղուն մրհաճրրլրքէն,
Բրթրն մաֆ իրէն էրմանը միլլաթէն,
Դիր գայնիւղ չիղուվ էրմանը միլլաթէն...

Հազար ինը հարյուր տասնհինգ թվին
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության,
Լրիվ ոչնչացրին հայ ժողովրդին,
Տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին...[1]

Եվ, իրոք, «տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին», որն անղեկ և անզեն, անօգնական և հուսահատ քշվում էր տեղահանության և աքսորի ճամփաներով:

Երիտթուրքական բռնակալության նախաձեռնած տեղահանությունն ու կոտորածը մի քանի ամիսների ընթացքում արդեն ծավալուն բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան և Անատոլիան: Մեկը մյուսի ետևից դատարկվում էր Սվազը, Շապին-Գարահիսարը, Խարբերդը, Մալաթիան, Դիարբեքիրը, Իզմիթը, Բուրսան, Անկարան, Կոնիան և Փոքր Ասիայի հայկական այլ բնակավայրեր:

Սակայն ողբերգական այդ օրերին հայ ժողովրդի հոգում վերազարթնեց դարերի խորքից ժառանգաբար արյան հետ եկող «Մահ իմացեալը» ստրուկ կյանքից նախընտրելու և բռնությանը միահամուռ ուժով դիմադրելու հերոսացման իր խիզախ ոգին:

Երիտթուրքերի կազմակերպած համատարած սպանդի պայմաններում՝ արևմտահայերը երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ: Սակայն այդ ինքնապաշտպանական մարտերը մղվում էին առանց ծրագրի, տարերայնորեն, մեկը մյուսից անջատ: Բայց, այնուամենայնիվ, հերոսական պայքարի շնորհիվ, Վանում, Շատախում և այլուր տասնյակ հազարավոր կյանքեր փրկվեցին երիտթուրքական դաժանություններից:

Առաջին աշխարհամարտի սկզբում մուսալեռցիները ստիպված ենթարկվել են թուրքական զորահավաքին ու պատերազմական տուրքերին,

1 *Սվազլյան Վ.*, Մուսա Լեռ. – ՀԱԲ, հ.16, Երևան, 1984, վկ. 161, էջ 128:

սակայն նրանք չեն ենթարկվել բռնագաղթի և տեղահանության հրամանին, այլ զենքով պաշտպանել են իրենց կյանքն ու պատիվը:

Մուսա Լեռան ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակիցներ *Մերոբ Գյոզալյանը* (ծնվ. 1882 թ.), *Մովսես Փանոսյանը* (ծնվ. 1885 թ.), *Պողոս Սուպկուկյանը – Աշուղ Դևելլին* (ծնվ. 1887 թ.), *Աննա Դավթյանը* (ծնվ. 1888 թ.), *Մովսես Բալաբանյանը* (ծնվ. 1891 թ.), *Հովհաննես Իփրեջյանը* (ծնվ. 1896 թ.), *Իսկուհի Կոշկարյանը* (ծնվ. 1902 թ.), *Թովմաս Հաբեշյանը* (ծնվ. 1903 թ.), *Դավիթ Դավիթյանը* (ծնվ. 1905 թ.), *Սարգիս Ադամյանը* (ծնվ. 1906 թ.) և ուրիշներ հանգամանորեն անդրադարձել են պատմական այդ իրադարձություններին[2]:

Մուսալեռցի *Ասատուր Մախուլյանը* (ծնվ. 1911 թ., գ. Բիթիաս) պատմել է. «*…Երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, թուրքական կառավարությունը բոլոր հայ տղամարդկանց հավաքեց, բանակ տարավ: Մնացինք կանայք, երեխաներ և ծերեր: Երբ սկսվեց տեղահանությունը, Ջեյթունում պաշտոնավարող պատվելի Տիգրան Անդրեասյանը ընտանիքով այնտեղ էր ապրում: Եվ երբ թուրքերը տեղահանեցին հայերին, նրա ընտանիքն էլ այդ խմբի հետ տեղահանում են: Տիգրան Անդրեասյանը ներկայանում է այդ խմբի թուրք ղեկավարին, և քանի որ այդ ժամանակ հոգևոր (բողոքական) առաջնորդներին թույլատրում էին, նրան արտոնում են դուրս գալ աքսորականների թափորից: Տիգրան Անդրեասյանը ընտանիքով փրկվում է: Նա գալիս է իր ծննդավայրը՝ Մուսա լեռ, բացատրում է, թե ինչ է կատարվում այլ տեղավայրերի հայության հետ և, որ ավելի լավ է լեռ բարձրանալ, քան՝ մեռնել*»[3]:

1915 թ. հուլիսի 26-ին ստացվում է հարևան Քեսաբի հայության տեղահանության հրամանը: Մուսալեռցիները, զգալով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 29-ին Յողուն-Օլուք գյուղում կազմակերպում են վեց գյուղերի ներկայացուցիչների խորհրդակցություն: Ժողովի ընթացքում որոշ հոգևորական և ունևոր մուսալեռցիներ, հավատալով կառավարության կեղծ խոստումներին, նախընտրում են գաղթել: Ժողովի ժամանակ.

…Խուսքը լավիցում Եաղուբինց Իսայէն.
— Լիոը թըղ ընևին, — ասուց կէղանդէն, —
Վէզ չը՛բըր ձոինք մինք միր դուշմանէն.
Նիդինք, նիդըդվինք, միոնինք միր խուղէն:

2 Մուսալեռցի ականատեսների հուշ-վկայություններն ամփոփված են իմ «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», Երևան, 1994 (վկ. 1397–1403, էջ 268–292) և «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ», Երևան, 2011 (վկ. 281–297, էջ 478–510) գրքերում:

3 *Սվազլյան Վ.*, Հայոց ցեղասպանություն, վկ. 297, էջ 507:

…Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.
— Թող լեռ բարձրանան, — ասաց գյուղացիներին, —
Թշնամու առաջ մենք վիզ չենք ծռի.
Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք:[4]

Հայրենի հողը սրբություն է, և մուսալեռցիները միասնաբար երդվում են «*զարկել, զարկվել*», բայց իրենց նախնիների «*հողում մեռնել*»:

Հուլիսի 30-ին Անտիոքի գայմագամ Մարուֆը հրամայում է բոլոր հայերին թողնել իրենց ունեցվածքն ու տները և գաղթել: Այնինչ մուսալեռցիներն արդեն գործնական քայլերի էին դիմել:

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այր ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, իրենց անասուններով և պարեն-սննդամթերքով բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ կովով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին, կրծքով պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը:

Բոլորն անխտիր, առանց ժամանակ կորցնելու, կազմակերպված ձևով սկսում են անտառի ծառերից հյուղակներ կառուցել, խրամատներ փորել, ամուր պատերով պատնեշներ բարձրացնել՝ ներսից կրակելու համար փոքրիկ անցքեր թողնելով: Որոշ տեղերում թշնամուն տեսնելու համար կտրատում են խիտ անտառները: Փոքրիկ տղաները՝ «թելեֆոնի տղաները», կապավոր են դառնում: Կանայք կազմակերպում են սնունդը, աղջիկներն ու հարսները հեռվից ջուր են կրում կովողների համար: Ստեղծվում է Զինվորական հատուկ մարմին՝ Եսայի Յաղուբյանի գլխավորությամբ, ինչպես նաև Վերապատվելի Տիգրան Անդրեասյանի, Պետրոս Դմլաքյանի, Խաչեր Դումանյանի, Պետրոս Դուդակլյանի և այլոց մասնակցությամբ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պաշտպանական դիրքերին: Կռվողները շուրջ 600 հոգի էին, որոնք ունեին ընդամենը 132 որսորդական հրացան և սահմանափակ քանակության փամփուշտներ: Լեռան պաշտպանությունը բաժանված էր չորս շրջանների՝ Գըզըլջա, Գուզջըղազ, Դամլաջըք և Գափլան-Դուզախ, որտեղ դիրքավորվել էին ինքնապաշտպանական ջոկատները: Մուսա լեռը դարձել էր ռազմաճակատի բերդ:

Այդ ընթացքում ժողովրդական մարտաշունչ երգը ևս քաջալերել ու ոգևորել է մուսալեռցիներին.

Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզի կուզե տեղահան անել,
Անապատներում մեզ բնաջնջել:

4 *Սվազլյան Վ.*, Մուսա լեռ, վկ.161, էջ 128:

Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չենք խոնարհվի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ցիր ու ցան կանենք բանակը տաճկաց…:[5]

Մուսալեռցիները դեռ չէին ավարտել լեռան վրա իրենց նախապատրաստական աշխատանքները, երբ թշնամին հարձակման է անցնում:

Օգոստոսի 7-ին, Սվեդիայի մյուդիր (վերակացու) Խալիդի գլխավորությամբ 200 ասկյար սկսում են հարձակվել: Ըստ լիբանանաբնակ Թովմաս Հաբեշյանի, «*…Լեռան վրա յուրաքանչյուր ընտանիք փայտից խրճիթներ շինեց, քանի որ կղմինդր, քար չկար: Երիտասարդ տղաները պատնեշներ շինեցին: Երկու ժողով ըրին: Մեկը՝ վարչական, լեռան ներքին կյանքը, մյուսը՝ ռազմական ուժերը պիտի կազմակերպեր: Այս մարմինները կային: Կռիվը սկսավ: Առաջին պատրասիան գնդակը արձակեց Սարգիս Գաբաղյանը: Կռիվը շարունակվեց: Թշնամին զորավոր դիմադրություն մը տեսավ և ետ նահանջեց*»[6]: Այնպես որ, թուրքերը հանդիպում են համառ դիմադրության և վեց ժամ ապարդյուն կռվելուց հետո, կորուստներ տալով, նահանջում:

Օգոստոսի 10-ին թշնամին համալրված ուժերով՝ 5.000 զորքով, կրկին դիմում է հարձակման, այս անգամ՝ արդեն թնդանոթներով: Կռիվը տևում է տասներկու ժամ՝ հորդառատ անձրևի տակ, սակայն մուսալեռցիները կռվում էին քաջաբար:

Օգոստոսի 19-ին թշնամին արդեն 9.000 զորքով գրոհում է՝ Ֆախրի փաշայի գլխավորությամբ: Այդ կռիվը տևում է երկու օր: Թշնամին փորձում է ճեղքել պաշտպանական գիծը, բայց քաջարի մուսալեռցիները կանխում են՝ պաշտպանելով իրենց դիրքերը: Թուրքերը կրկին նահանջում են՝ տալով 1.000 զոհ: Մուսալեռցիները, իջնելով լեռան բարձունքից, բավականաչափ ռազմամթերք են ձեռք բերում:

Թուրքերը նոր հարձակման չեն անցնում, այլ՝ մտածում են պաշարել լեռը, որպեսզի հայերը սովամահ լինեն: Թշնամին Մուսա լեռան ստորոտում կենտրոնացնում է 15.000 զինվոր, որոնք երեք կողմից շրջապատում են լեռը՝ հույս ունենալով, որ շուտով հայերի պարենն ու զինամթերքը կվերջանա և նրանք կհանձնվեն, սակայն մուսալեռցիների կամքն անկոտրում էր:

Հակառակորդը նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար: Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառ-

5 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ. 402, էջ 157–158:

6 *Սվազլյան Վ.*, Հայոց ցեղասպանություն, վկ. 291, էջ 502:

վում են: Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած ընդամենը երեք հարյուր որսորդական հրացանները: Լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով նրանք ճարահատյալ սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. «*Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցեք*», իսկ մյուսի վրա պատկերում Կարմիր խաչի նշան և պարզում լեռան լանջին: Գիշերով դրանց շուրջ խարույկներ էին վառում, որ նավերը հեռվից նկատեն:

Սակայն երկար ժամանակ հորիզոնում ոչ մի ռազմանավ չէր երևում: Թուրքերը մի քանի անգամ դիմում են հայերին՝ անձնատուր լինել, բայց մուսալեռցիները հրաժարվում են՝ պահպանելով իրենց դիրքերը:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Կիշեն» ռազմանավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: 75-ամյա Մովսես Կըրըկյանը, թիթեղյա փոքրիկ տուփը վզին, մեջը խնդրագրով, ծովն է նետվում: Նա լողալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով ծնկի գալիս, և նավապետ Լուի Դարտիժ դը Ֆուրնեին է հանձնում անգլերեն աղերսագիրը, որտեղ գրված էր. «…Մենք հոս ապաստանած ենք թրքական բարբարոսութիւններէն, խժդժութիւններէն, կոտորածէն եւ մահէն: …Դիմում կընենք հանուն քաղաքակրթութեան, ընդդէմ քաղաքակրթութեան այս ոսոխին, եւ կը խնդրենք, որ ազատէք մեր կեանքը ու պատիւը: …Մի թողուք, որ ոչնչանանք, ազատեցէք մեր կեանքը, ազատեցէք մեր պատիւը, քանի դեռ շատ ուշ չէ»[7]: Ֆրանսիական նավի վրա էր նաև հայ ծովային սպա Տիրան Թեքեյանը, որը թարգմանիչի դեր է կատարում:

Ռազմանավը ռմբակոծում է թուրքական դիրքերը և, հեռանալով, խոստանում իր երկրի կառավարության որոշման համաձայն կամ զենք բերել, կամ ութ օրից վերադառնալ և հայերին ազատել:

Սեպտեմբերի 9-ին թուրքական բանակի հրամանատար Ռիֆաթը մուսալեռցիներից պահանջում է երկու ժամվա ընթացքում անձնատուր լինել, հակառակ դեպքում սպառնում է հարձակվել և բոլորին կոտորել: Մուսալեռցիները դեռ չէին հասցրել պատասխանել, երբ թուրքական հրետանին որոտում է, և սկսվում է մի նոր ահավոր ճակատամարտ: Հերոսամարտի չորս ճակատամարտերում կռփված մուսալեռցիներն իրենց դիրքերից ջախջախիչ հակահարված են հասցնում թուրքական զորքերին, իսկ ողջ մնացածները՝ խուճապահար փախչում: Այսպիսով, քաջարի մուսալեռցիները 40 օրում Գլզըլջայի, Գուզջըղազի, Դամլաջըքի և Գափլան-Դուզախի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ են մղում թուրքերի դեմ և հաղթում:

7 *Անդրեասյան Տ.*, Զէյթունի անձնատուութիւնը եւ Սուէտիոյ ինքնապաշտպանութիւնը, Գահիրէ, 1915, էջ 44:

Սեպտեմբերի 13-ին Միջերկրական ծովի խորքում երևում են ֆրանսիական «Կիշեն» և «Ժաննա դ'Արկ» ռազմանավերը: Շուտով հայտարարվում է, որ ֆրանսիական կառավարությունը խոստացել է հայերին փոխադրել Պորտ-Սայիդ:

Սեպտեմբերի 15-ին շուրջ 4.200 մուսալեռցիներ մակույկներով փոխադրվում են հեռվում խարիսխ գցած ֆրանսիական ռազմանավեր, որոնք ուղղություն են վերցնում դեպի Պորտ-Սայիդ: Եգիպտոսի հայ գաղութը Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուբարի գլխավորությամբ և հոգատարությամբ արդեն տեղի վրանաքաղաքում կազմակերպել էին մուսալեռցիների հարմարակեցությունը:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից, Փարիզում բնակվող *Դավիթ Դավիթյանը* (ծնվ. 1905 թ., գ. Քաբուսիե) վերհիշել է. «*…Երբ Մուսա Դաղի կռիվը սկսավ, ես տասը տարեկան էի և աչքովս տեսած եմ: Հայրիկս եր եկած էր գյուղ, և բոլորին հավաքեցին, ըսին՝ լեռը պիտի բարձրանանք: Հայրիկս մեզի լեռը բարձրացուց: Երբ թուրքերը հարձակվեցան, մենք արդեն լեռան ժայռերուն մեջը պաշտպանված էինք*»[8]:

Մուսա լեռան հերոսամարտի մասին ավելի մանրամասն ու հանգամանալից գաղափար է տալիս մասնակից, 105-ամյա *Մովսես Փանոսյանի* (ծնվ. 1885 թ., գ. Հաջի-Հաբիբլի) հուշ-վկայությունը. «*Մուսա լեռան կռվի ամենեն վերջի պաշտպանը ես եմ մնացած՝ ահա ողջ…: 1915 թ. հուլիսի 13-ին թուրք հոքումաթը (կառավարություն), հրաման հանեց, որ յոթ օրվա մեջ ամբողջ հայերը պետք է գաղթեն: Մեր յոթ գյուղերուն մեծերը Յողուն-Օլուքի մեջ ժողով ըրին, ըսին. «Իս հուս ձնուռ իմ. հու՛ս ալէ բըր միոնիմ, իս չը՛մ ուրթօ եասսէր քիմը դուշմանէն եամրէն վըրքը չարչարանքում միոնիլ. թվունքը ծառիս գը միոնէմ եաս դիղը, թաքա մուհաջըր չը՛մ ընսօ*»: (Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտի մեռնեմ, ես չե՛մ գնա ստրուկի պես թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա): *Ադպես ալ որոշեցինք՝ լեռը էլլալ: Ով ինչ ուներ՝ եաթախ (ներքնակ), եորղան (վերմակ), թենջիրե (կաթսա), թավա (տապակ), անասուն, հավ, ամեն ինչ լեռը հանեցինք…: …Հիմա աշիաարիը չու՞ց խառնվուռ ի, ադ վախտն ալ ադպես էր: Մինչև Մուսա Լեռան կռիվը մեր Խըդրը-Բեկի հնչակյանները պարոն Աղասի Թուրսարգսյանի հետ գնացել էին Զեյթուն՝ կռվելու թուրքերուն դեմը: Անոր համար, երբ մեր Մուսա Լեռան կռիվը սկսանք, պարոն Աղասին ըսավ. «Ասոնք իմ ցանած սերմերն են: …Իմ ունեցածը մեկ հատ որսորդական հրացան էր,*

8 *Սվազլյան Վ.*, Հայոց ցեղասպանություն, վկ. 292, էջ 503:

կապտուլը (պատրոն) պիտի բերնից լցնեի, պիտի շշով ծեծեի, որ կրակեր, ձեռքիս շնորհքով զենք չկար, որ անոնց հերն անիծեի»[9]:

Մովսես Փանոսյանը վերհիշել է, թե ինչպես մուսալեռցի տղամարդկանց հետ հավասար իրենց նվիրվածությամբ ու հերոսությամբ աչքի են ընկել նաև բազմաթիվ կանայք և նույնիսկ երեխաները, որոնց «թելեֆոնի տղաներ» էին անվանում. «*...Թուրքերը չորս անգամ հարձակվեցան մեզ վրա, ամմա ամեն անգամ աղվոր պատասխան տվինք անոնց: Մեր Մուսա Լեռան տղաները լավ կկռվեին, կնիկ, աղջիկ կօգնեին, կուժերով ջուր կբերեին խմելու: Քանի կնիկ պատրոնդաշը կապած մեզ հետ կկռվեին, մեկին անունը Վարդուհի Նաշալյան էր, ան շատ քաջ էր...: Պզտիկ չոջուխներն (երեխա) ալ կապավոր էին դարձած, խաբար կտանեին աս ճակատեն՝ ան ճակատը...: Ամենքն ալ գործի վրա էին: Օր մը ալ մեկ թուրք մը էկել էր լեռին վրա, որ մեզի թալանի, մեր կնիկները բռնել, քարերով սպանել էին դրան, աֆերիմ (կեցցե՛) կնիկներ»*[10]:

Հերսամարտի մասնակից *Մովսես Փանոսյանը* վերհիշել է նաև հետագա կարևոր իրադարձությունների մանրամասները. «*Մեր թիկունքի կողմը Միջերկրական ծովն էր, հոն գիշերները խարույկ կվառեինք, որ դեմեն անցնող նավ ըլլա նե, տեսնա մեզի՝ մոտենա: Օրվա մեջ ալ արդեն պատրվելի Անդրեասյանը մեծ չարշաֆի* (սավան) *մը վրա կարմիր խաչը նկարած, կախել տված էր լեռին դոշը* (լանջ)...: *Օրեր եղքը, վերջապես ծովին խորքը նավ մը երևաց: Կըրըկյաններուն տղան աղվոր կլողար, նետվեց ծովը, սկսավ լողալ: Անոր վիզեն երկաթե տուփ մը կար կախված, մեջը օտար լեզվով գրված նամակ մը կար: Նավուն մեջեն դյուլբիններով* (հեռադիտակ) *կնային, կտեսնան, որ մեկը կլողա դեպի նավը, կօգնեն, նավ կբարձրացնեն: Կըրըկենց Մովսեսը հեմեն ծունկի կուգա, խաչ կհանե, ըսելու համար, քի՝ քրիստոնյա ենք, քանի որ ինքը ֆրանսերեն չէր գիտեր, որ խոսա: Գրված նամակը կհանե կուտա կապիտանին, անոնք կկարդան, կհասկնան, քի մոտ հինգ հազար հայ քրիստոնյա մուսալեռցիներ լեռին վրա Աստծո փրկությանը կսպասեն»*[11]:

Ականատես *Իսկուհի Կոշկարյանը* (ծնվ. 1902 թ.) նույնպես վկայել է. «*...Ութ օր վերջը ֆրանսական նավեր էկան, դեմերնիս կայնան: Ֆրանսացիները պզտիկ նավակներով էկան-էկան, մեզի տարին մեծ նավերուն մեջ: Ամեն բան թողինք լեռը: Միայն ջաներնիս ազատեցինք: Իմ հերը՝ Հայրապետ Պոլիսյանը, ճամփաները կպահեր, իջանք ծովին քենարը...*

9 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ. 1397, էջ 268–269:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

Եսայի Յաղուբյանը, որ մերին կնքահայրն էր, ամենեն վերջը նավ մտավ»[12]:

Եվ հյուսվել է դյուցազներգությունը.

Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են,
Իրար նայելով կքաջալերվեն,
Վախն ինչ բան է՝ երբեք չգիտեն,
Քանի որ ունեն քեզի, Մուսա՛ Լեռ:
Մեր Մուսա Լեռն էր լրիվ ծառաստան,
Կոչվում էր նաև փոքրիկ Հայաստան:

Մենք յոթը գյուղով սարը բարձրացանք,
Թշնամու առաջ չխոնարհվեցանք,
Քառասուն օրում մենք շատ զոհ տվինք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք...[13]:

Հերոսամարտի մասնակից 105-ամյա *Մովսես Փանոսյանը* վերհիշել է նաև մուսալեռցիների կյանքը Պորտ-Սայիդում. «*Կնիկ, չոջոխ՝ բոլորը մտած են նավը: Նավը շարժվեցավ: Ահագին ժամ էրթալեն ետքը ֆրանսացիները գերմանական նավ մը գերի առին: Մենք փոխվանք ադ գերմանական նավը: Ան մեզ տարավ Պըրտը-Սայիդ՝ Պորտ-Սայիդ... Իջանք Եգիպտոսի հողին վրա: Անապատի դեղին ավազը ոտքերնիս կրակի պես կվառեր: Տեսանք շարքերով բրեզենտե չադըրներ* (վրան) *լարել են մեզի համար, մեջը պառկելու անկողին, ամեն ինչ...: Ան ժամանակ Պողոս Նուբար փաշան Եգիպտոսի մեծերեն էր, ողորմի իրա հոգուն, ան շատ օգնեց մեզ ալ, Դեր Զորի հայ որբերուն ալ: Հոն մեր երեխեքը անապատի ավազի վրա հայերեն տառերը կգրեին, կսորվեին, մինչև բացվավ՝ վրանի մը տակ, Սիսվան վարժարանը, քոչս ալ՝ հիվանդանոց մը...: Հոն անգլիացի կապտններ (հրամանատար) եկան, մեզի մարզանք ընել կուտային՝ ուան, թու, ռայթ, թու (մեկ, երկու, աջ, երկու կըսեին...): Մենք ալ կքայլեինք: Ադ հրաման տվողը, որ անգլիացի էր, մեզի ըսավ. «Դուք ֆրանսացիի կողմեն եկեք, անցեք մեր կողմը»: Մենք ըսինք. «Ֆրանսացին մեզի ազատեց, մենք ֆրանսացիին կողմը պիտի ըլլանք»: Հոն Մլեհը եկավ, մեզի գտավ: Ետքը մենք կամավոր գրվեցանք ֆրանսական բանակին մեջը, Հայկական լեգեոնի հիմքը դրինք: Ամեն կողմեն՝ Խարբերդեն, Սեբաստիայեն, Արաբկիրեն, Հուսեյնիկեն, Կիլիկիայի ամեն կողմերեն հայ քաջերը եկան, միացան մեզի, գացինք Նաբլուսի ջեփեն* (ռազմաճակատ) *կովեցինք, շա-*

12 *Սվազլյան Վ.*, Հայոց ցեղասպանություն, վկ. 288, էջ 488:

13 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ. 403, էջ 158:

հեցինք…: Անգլիացին մեր հայ մեծերուն ըսավ. «Դուք մեր թագավորեն ալ հարուստ եք, որ աս տեսակ քաջ կտրիճներ ունիք…»»[14]:

Եվ, իրոք, հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական և բրիտանական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալենբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զորամաս ունենալուս համար: Նրանք կռուեցան փայլուն կերպով, եւ մեծ բաժին մը ունեցան հաղթանակի մէջ»[15]:

Պորտ-Սայիդում մուսալեռցի մեծահասակ տղամարդիկ իրենց ընտանիքի ապրուստը հոգալու համար փայտից սանր ու գդալներ էին պատրաստում, իսկ կանայք ու աղջիկներն օտարերկրյա զբոսաշրջիկներին հիացնում էին իրենց նրբահյուս ասեղնագործություններով ու նախշազարդ գորգերով:

Սակայն Պորտ-Սայիդում անցկացրած չորս տարիների ընթացքում Մուսա Լեռ վերադառնալը մնում էր երազ, որը երգի է վերածվել.

…Եաստրձա խնթրիցա
Այարում ծիօն հիզնիլա,
Ձէրէլ Մուսա ուրթիլա,
Թիզինէն թէօզ քաղիլա,
Ընղայզինէն ունղայզ քաղիլա:

…Աստծուց խնդրեցի՝
Թամբած ձի հեծնել,
Գնալ Մուսա Լեռ,
Թզենուց թուզ քաղել,
Ընկուզենուց ընկույզ քաղել:[16]

Մովսես Փանոսյանը անդրադարձել է նաև հերոսական մուսալեռցիների աստանդական կյանքին. «*…Եւրքը մեզի տարին Այնճար, հոն ալ բաց դաշտ էր, սկսանք նոր տուներ շինել, նոր այգիներ ցանել, ջուր բերինք, քանի մը տարիեն դրախտ դարձուցինք Այնճարը: Ալ նարինջ, լիմոն, ինչ միտքեդ կանցնի՝ կբուսներ…*»[17]:

Եվ նախորդ երգի հենքի վրա հյուսվել է նոր ժամանակների հայրենակարոտ նոր երգը.

14 Նույն տեղում, վկ. 1397, էջ 270:

15 *Քելէշեան Մ.*, Սիս-Մատյան, Բեյրութ, 1949, էջ 592:

16 *Սվազլյան Վ.*, Մուսա լեռ, վկ. 173, էջ 133:

17 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ. 1397, էջ 270:

Եասրձա խնթրիցա՝
«Փոպեդա» նավը նստիլա,
Հայաստան ուրթիլա,
Մակթաբ ուրթիլա,
Խիլք ու շնիրք սուրվիլա,
Միր վաթանը շինցընիլա:

Աստծուց խնդրեցի՝
«Պոբեդա» նավը նստել,
Հայաստան մեկնել,
Դպրոց հաճախել,
Խելք ու շնորհք սովորել,
Մեր հայրենիքը շենացնել[18]:

Իր հուշ-վկայության վերջում Մուսա Լեռան հերոսամարտի մասնակից *Մովսես Փանոսյանն* արդեն ներկայացնում է իրենց կյանքը Հայաստանում. «*…1946 թվին մեր Հայաստանեն լուր եկավ, թե ով կուզի՝ թող գա Հայաստան, շատնանք, միանանք, որ թուրքի ձեռքեն մեր հողերը եր առնենք: Տուն, տեղ, այգի, ամեն ինչ եղածին պես ձգեցինք, ելանք, եկանք Հայաստան*»[19]:

Մուսալեռցի դյուցազուններն առաջիններից էին, որ իրենց և իրենց սերունդների կյանքը կապեցին Մայր Հայրենիքի հետ:

1946 –1947 թթ. մուսալեռցիները հայրենադարձվելով՝ բնակություն են հաստատում Երևանում և մերձակա նորակառույց թաղամասերում (Նոր Կիլիկիա, Նոր Արեշ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Շահումյան, Հաղթանակ), ինչպես նաև՝ Հայկական ԽՍՀ տարբեր շրջաններում՝ Էջմիածնում (այժմ՝ Վաղարշապատ), Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Աշտարակում, Արարատում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Ալավերդիում, Կապանում, Նոր Մուսա լեռ ավանում և այլուր:

Մովսես Փանոսյանը ևս բնակություն է հաստատում Նոր Մալաթիա թաղամասում, և ընտանիքով սկսում են աշխատել ու արարել. «*Երևանի Մալաթիա թաղամասը այն ժամանակ շատ փոքր չիկար: Ես, կինս՝ Իսկուհին, հինգ փղաներս ու երկու աղջիկներս սկսանք նոր, երկու հարկանի քարաշեն մեծ փոքր մը շինել: Ես աշխատում էի մոտիկի կոլխոզը* (կոլեկտիվ տնտեսություն), *փղաներս շինարար էին: Երևանի մեջ ինչքան մեծ շենք կա՝ վրան աշխատած են՝ Մատենադարանը, ՑԵԿան*[20], *հրապարակի*

18 *Սվազլյան Վ.*, Մուսա լեռ, վկ.173, էջ 133:

19 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ.1397, էջ 270:

20 Նկատի ունի Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի շենքը, որն այժմ դարձել է ՀՀ Ազգային ժողովի նստավայրը:

շենքերը, սպորտային համալիրը, ուրիշ շատ մը շենքեր շինած են: …Արդեն հարյուր հինգ տարեկան եմ, ուրքս, ձեռքս դահա կբռնե, ամեն տարի սեպտեմբերին մեր հարիսայի օրվան անհամբեր կսպասեմ, որ մեր ամեն կողմի մուսալեռցիներու հետ երթանք մեր նոր հուշարձանին քովը, գիշերով հարիսան եփենք ու մատաղի պես բոլորին բաժնենք, որ ուտողը իմանա, որ մուսալեռցիները, հարիսայի հատիկներու պես իրար միացած, կովեցան իրենց ազատլըիի՝ ազատության համար. չունքի Ազաղլըիը թվունգէն ձուարն ի (*Ազատությունը հրացանի ծայրին է*)»[21]:

Այդ ժամանակ Հայրենական մեծ պատերազմը նոր էր ավարտվել, և Հայրենիքում ընտանիք չկար, որ մի ճրագ չունենար հանգած, մի զոհ չունենար տված ֆաշիզմին հաղթելու համար: Հայրենադարձները գալիս էին սպեղանի դնելու հայրենիքի վերքերին՝ ձեռք-ձեռքի տված վերականգնելու ավերվածը: Հակառակ հետպատերազմյան տնտեսական ծանր պայմաններին, յուրաքանչյուր ընտանիքին վարկ տրվեց, հողամաս հատկացվեց բնակարան կառուցելու համար:

Սակայն Միջերկրական ծովի բարեխառն ափերից դեպի կլիմայական շեշտակի փոփոխություններ ունեցող հայրենիքը սոսկ աշխարհագրական տեղաշարժ չէր հայրենադարձների համար, այլ՝ այն նախ և առաջ ենթադրում էր հասարակական-քաղաքական կյանքի նոր՝ սոցիալիստական կացութաձև իր յուրօրինակ հասարակական համակարգով… Հակառակ այդ բոլորին, հայրենադարձ մուսալեռցիների համար սկսվեց կյանքի նոր շրջանը, այս անգամ արդեն հայրենի հողի վրա: Նրանք այստեղ ևս ցուցաբերեցին հերոսացման նոր, փայլուն օրինակներ՝ երբեմնի հողի մշակները դարձան համայնական դաշտերի աշխատանքի հերոսներ: Նրանք իրենց քրտինքով օծեցին հայրենի հողի ամեն մի թիզը, որ հայկական խաղողից ստացվի նաև «Մուսա Լեռ» անունը կրող փրփրադեզ գինին: Իսկ երբեմնի հողի մշակների սերունդները, հայրենիքում համատարած գրագիտության և մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալով, դարձան նաև մտքի մշակներ՝ հայրենիքին տալով գիտության ու մշակույթի վաստակաշատ երախտավորներ, անվանի գիտնականներ, քաղաքական գործիչներ:

Ազատության և հերոսացման ոգին, որ արյան հետ էր ժառանգվել, որ մայրական կաթի հետ էր ներծծվել, պիտի առկայծեր, պիտի բոցավառվեր ու հոգու կրակ դարձած պիտի արարեր: Եվ հայրենաբնակ մուսալեռ-

21 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ.1397, էջ 270–271: 1990 թ. գարնանը վախճանվեց Մուսա լեռան հերոսամարտի վերջին մասնակից Մովսես Փանոսյանը՝ չտեսնելով Հայաստանի անկախության գործընթացի հռչակումը:

ցիները Էջմիածնի ճամփին հիմնադրեցին Մուսալեռ ավանը, որի բարձունքին իրենց խնայողությամբ կաթիլ-կաթիլ հավաքած նյութական միջոցներով, իրենց ստեղծագործ ու շինարար ձեռքերով կառուցեցին ու դեպի երկինք խոյացրին հերոսամարտի ոգին խորհրդանշող արծվանիստ հուշարձան-կոթողը՝ կից թանգարանով, որպեսզի ամեն տարի սեպտեմբերին մուսալեռցիները սրբազան ուխտի գան Հայաստանի ու աշխարհի տարբեր երկրներից ժամանած հյուրերով, հերոսամարտի օրերից մեզ հասած հնամենի դհոլ-զուռնայի խրոխտ հնչյուններով, ինքնատիպ երգ ու պարով, նաև ավանդական հարիսայով, նշեն համազգային տոնախմբություն դարձած Մուսա լեռան հերոսամարտի օրը Նոր Մուսա լեռան վրա՝ Հայրենի հողի վրա:

Հայրենադարձ մուսալեռցիներն աղոթքախառն տողեր են հղել առ Աստված.

Տեր, դուն պահե միշտ անսասան
Դյուցազնական Մայր Հայաստան,
Տուր հարատև խաղաղություն,
Կյանք ու արև, ազատություն,
Հայ դրոշով մեր պետական
Թող միշտ ապրի ազգն հայկական.
Ամեն[22]:

ГЕРОИЧЕСКОЕ СРАЖЕНИЕ МУСА ДАГА ПО СВИДЕТЕЛЬСТВАМ ОЧЕВИДЦЕВ

Вержине Свазлян

Резюме

В 1915 г., в течение 40 дней, мусадагцы во главе с Есаи Ягубяном, Петросом Дмлакяном и преподобным Тиграном Андреасяном вели ожесточенные бои с турками. Четыре важных сражения выиграли армяне на высотах Муса Дага – в Кзлджа, Кузджгаз, Дамладжык, Каплан-Дузаг.

Участники героической обороны Муса Дага, 105-летний *Мовсес Паносян* (1885 г. рожд.), *Погос Супкукян – Ашуг Девелли* (1887 г. рожд.), *Мовсес Балабанян* (1891 г. рожд.), *Ованнес Ипреджян* (1896 г. рожд.), *Тоник Тоникян* (1898 г. рожд.) и другие, которые в 1946-1947 гг. репатриировались в Советскую Армению, подробно рассказывали нам об этих исторических соб ытиях.

Героическая борьба мусадагцев потрясла весь мир. Она продемонстрировала, на что способна горстка народа, воспитанная на героических традициях прошлого и обладающая величием духа.

22 *Սվազլյան Վ.*, Կիլիկիա, վկ. 1391, էջ 250:

Ключевые слова: героическое сражение Муса Дага, Киликия, Дамладжык, военный корабль «Гишен», Красный Крест, Порт-Саид, палаточный городок, Аинджар, Армения, Новый Муса Лер.

THE HEROIC BATTLE OF MOUSSA DAGH ACCORDING TO THE TESTIMONIES OF THE EYEWITNESS SURVIVORS

Verzhine Svazlyan

Summary

In 1915, during forty days, the Moussa Dagh people under the command of Yessayi Yaghoubian, Petros Demlakian, and the Very Reverend Tigran Andreassian fought violent battles against the Turks. During this period, four important victorious battles took place on the heights of Moussa Dagh – Kezeldja, Kuzdjeghaz, Damladjik and Kaplan-Duzagh.

Some of the surviving participants of the heroic battle of Moussa Dagh, the 105-year-old *Movses Panossian* (born in 1885), *Poghos Supkukian – Ashugh* (Minstrel – Arm.) *Develli* (born in 1887), *Movses Balabanian* (born in 1891), *Hovhannes Ipredjian* (born in 1896), *Tonik Tonikian* (born in 1898) and others, who repatriated to Soviet Armenia in 1946-1947, have communicated to us the details of this historical events.

The heroic battle of Moussa Dagh shook the world; it demonstrated the immense capabilities of a handful of people who have heroic traditions and unanimous will power.

Keywords: heroic battle of Moussa Dagh, Cilicia, Damladjik, “Guichen” steamship, Red Cross, Port-Saund, tent city, Aynjar, Armenia, New Moussa Ler.